

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.  
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԱՅԿԵՆՈՒԹՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հայ-գերասանական խմբի անդամները սրտի ցաւով յայտնում են լուսարժանէր  
հասարակութեանը իրանց ընկերով.

## ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՀԱՄԵԱՆՑԻ

յանկարծական մահով, և խնդրում են հանգուցեալի ծանօթներին, բարեկամներին  
ու յարգողներին շնորհ բերել յուղարկւորութեանը ուրբաթ, սեպտեմբերի 16-ին,  
առաւօտեան 10 ժամին, վաճառի մայր-եկեղեցին, և այնտեղից խօշիվաւոր հան-  
գատարանը:

1—1

### ԲՈՒՂԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Ուղղման խնդրեք. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-  
խիլը գեղեցիկ. Պրոֆէսոր Բեդրազովի դասա-  
խօսութիւնը. Բանուորական փորձագործ օգնու-  
թեան դրամարկ. Նամակ վաղարշապատից. Նա-  
մակ Ղուբայից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ ՏԵ-  
ՍՈՒԹԻՒՆ. Ստուգի կոնք. Հնդկաստան. Արտա-  
քին լուրեր. — ՀԵՆՈՒԳՐԱՆԵՐ. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ստուգի.

### ՈՒՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր երկրի տնտեսական մեծ և կարեւոր  
խնդիրներից մէկն է ուղղման խնդիրը, որը  
վարդուց սպասում է իր արժանաւոր լուծ-  
ման. նա ոչ միայն արդիւնաբերութեան  
զարգացման և ընդարձակելու խնդիր է,  
այլ շատ տեղերում նոյն իսկ անհրաժեշ-  
տութիւն. Այն ժամանակ, երբ մեր երկրի  
գիւղական դասակարգը գտնւում է աւ-  
աւաճողութեան վրա, երբ հացի պակա-  
սութիւնը զգացող շինական ժողովրդի լա-  
ւազդին ոյժերը լծողում են անձը և բաժնը  
ու բաղաւորութեանը աշխատանք որո-  
նելու, այդ նոյն միջոցին դեռ ընդարձակ  
գաշտեր և անապատներ ընկած մնում են  
ամայի և անմշակ, շնորհիւ ջրի պակասու-  
թեան, սպասելով, որ մի մեծ նախաձեռնող  
ոյժ ուղղւոյն դարձնի այդ էական գործի վրա  
և ձեռնարկէ առուների մի ամբողջ սխտեմի  
շինութեան:

Ահա Սարգսյանի դաշտը, որ ձգված  
է Արագածի ստորոտում, Ախուրեանի մօտ,  
և կարող է ուղղվել Ախուրեանի անօգուտ  
մնացող ջրերով: Ահա Սարգսյանի գաւա-  
ռի ընդարձակ տափարակները, որոնք կա-  
րող են ջուր ստանալ թէ Արագածից և թէ  
ձիւնահալքի ու բարձրադիր լճերի ջրերից:  
Այնպէս աւերակների, հին առուների հետ-  
քերը ցոյց են տալիս, որ այդ երկրի հին  
ժամանակների խտացած ազգայնականութիւ-

նը միջոցներ էր գտել փողով այդ տեղերը:  
Նոյն իսկ Արարատի վրա, ձիւների բարձ-  
րութիւնից սկսած՝ անցնում են առուներ,  
որոնք ջուր են եղել մատակարարում ստո-  
րոտի Ղօրղան, Խարաբապաղար աւերված  
քաղաքների և նրանց շրջակայ տեղերի  
բնակիչներին: Թիւրքիայի սահմանագծի  
վրա գտնվող Բալըղդեզը առուներ է տա-  
լիս եղել Սուրմալուի գաւառին, իսկ Սի-  
նակի այժմեան կաթնայնման տափարա-  
կը ներկայացնում է եղել իր ներքին մա-  
սում մի մեծ ջրամբար՝ ստորադիր տափա-  
րակների համար:

Իսկ ինչ վերաբերում է այնպիսի մեծ և  
ընդարձակ անապատներին, ինչպէս են Մու-  
ղանի, Միլի, Շիրակի տափարակները, նը-  
րանց բաց են անում արդիւնաբերու-  
թեան զարգացման համար այնպիսի մեծ  
տարածութիւններ, որ երկար տարիներ կա-  
րող են ապահովել մեր երկրի ժողովրդի  
կարիքները և պէտքերը:

Ջրանցքներ, ջրամբարներ, առուների մեծ  
և բազմաթիւ ձեւաւորութիւններ շինելը  
հեշտ գործ է. նա պահանջում է մեծ  
գրամագուլով, որ կարող է ստացվել կամ  
պետութեան օժանդակութեամբ և կամ  
մասնաւոր ընկերակցութիւնների հաւաքա-  
կան ոյժով: Բացի այդ կարեւոր է, որ այդ  
ձեռնարկութեան հետ միասին մշակվի մի  
պարտաւորեցուցիչ հրահանգ՝ թէ ջրաբաշ-  
խութեան և թէ նոր գիւղերի հիմնարկու-  
թեան վերաբերութեամբ, որով ղեկավար-  
վելին ուղղման գործին զուգն կանգնած  
հաստատութիւնները:

Այնպիսի մի գործը, իբրեւ մի մեծ և  
ընդարձակ ձեռնարկութիւն, որ վերաբե-  
րում է ազգայնականութեան կենսական շա-  
հերին և իրագործվում է մեծ տարածու-  
թեան վրա, աւելի յարմար է պետութեան  
համար, որ կարող է հաշտեցնել զանազան  
շահեր և պահանջներ:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՍԱՍՈՒՆ

Սասունի այս կիւր ոչ առաջինն է և ոչ երկ-  
րորդ: Դա վերջին 20—25 տարվայ շրջանում  
շարունակ տեղի ունեցող կռիւներից մէկն է,  
և, եթէ չենք սխալվում, 4-րդը պէտք է լինի:

Պարբերական բնաւորութիւն ստացած այդ կը-  
ռիւները բոլորում են պատմական հիմնաւոր  
շարժառիթներից: Ահա անհրաժեշտ ենք համա-  
րում այդ շարժառիթների մասին մի քանի խօսք  
անել:

Ներքին, երկար տարիների ընթացքում, Սասնոյ  
գաւառի լեռնականները մտերմական փոխադարձ  
յարաբերութեամբ կապված էին միմեանց հետ:  
Այս վաղմի կապերից, սկզբում համարեա անգի-  
տակցաբար, առաջացել էր քրդա-հայկական հա-  
մերաշխութեան մի բաց առիւթ օրինակ:

Ամբաս սերտ էր այս համերաշխութիւնը, որ  
միանգամայն նսեմացնում էր ազգայնական ամեն

Ուղղման խնդիրը իր հետ կը բերի և  
մի շարք կարեւոր տնտեսական, արդիւնա-  
բերական խնդիրներ, որոնց իրագործու-  
թեամբ մեր երկրը կարող կը լինի արդա-  
րացնել այն հոշակը, որ վաղուց վայելում  
է նա, իբրեւ մեծ հարստութեան ընդունակ  
երկիր, բայց որը ներկայումս պատկերաց-  
նում է մի անմշակ երկիր, աղքատ ազգա-  
բնակչութեամբ:

Յանկալի է, որ երկրագործութեան մի-  
նիստի գալուստը վերջապէս սկիզբ դնի  
այդ մեծ գործի ձեռնարկութեան: Ջրաբաշ-  
խութեան և ուղղման գործը վերաբերում  
է երկրագործութեան մինիստութեան, և  
անկասկած մինիստը կարող է այդ խնդրին  
տալ գործնական ընթացք:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐԻՒԿ ԳՅՅՑԻՆԵՐ

Տարիների ընթացքում «Մշակը» շատ խիստ  
կերպով քննադատել և հաւանել է Գեորգ Նե-  
սիւնեան զարդի հոգաբարձուի, Գեորգ Աբիմա-  
նիս, իբրեւ Ներսիսեան զարդի հոգաբարձուի և  
Քամոյսեան եկեղեցու երէցի: Արգար Յովհան-  
նիսեանին, իբրեւ Ներսիսեան զարդի հոգա-  
բարձուի և «Արձաղանքի» խմբագրի, և վերջա-  
պէս իշխ. Կոստանիսի Բէհուլեանին, երբ նա  
վերջին տարիներս մուտք գործեց հայոց հասա-  
րակական մի քանի գործերի մէջ, իբրեւ Ներսի-  
սեան զարդի հոգաբարձու:

Ոմանք կարծում էին, կամ գոնէ ձեռնում  
էին, իբրեւ թէ կարծում են, որ այդ խիստ յար-  
ձակամեքը, մեղադրութեամբ, քննադատութիւն-  
ները առաջ են գալիս անձնական կրքից,  
անձնական թշնամութիւնից: Ապացոյց դը-  
րան, որ այդտեղ անձնական ոչինչ չը կայ,  
ապացոյց, որ երկար տարիների այդ խիստ քը-  
ննադատութիւնը այդ մարդկանց գործունեութեան  
դէմ, բոլորովին հիմնված չէ եղել անձնական յա-  
րաբերութեան, նոյն իսկ կուսակցական հակա-  
կրութեան վրա, այն փաստը կարող է լինել, որ  
այժմեանից սկսած, երբ այդ մարդիկ հեռացած  
են հասարակական ապարիլից, երբ նրանք այ-  
նա ազդեցութիւն չեն կարող ունենալ այն հիմ-  
նարկութիւնների վրա, որտեղ բուն էին դրել, մենք  
միանգամայն արխիւն ենք գցում նրանց և  
միանգամայն մոռացութեան կը տանք նրանց:

Երկար տարիներ Նեանդալեան, Աբիմեան, Յով-

հաննիսեան և Բէհուլեան Ներսիսեան զարդի  
հոգաբարձուներ էին. երկար տարիներ Արգար  
Յովհաննիսեան իր ձեռքն էր առել Հրատարակ-  
չական ընկերութիւնը, երկար տարիներ այդ մար-  
դիկ մուտք էին գործել և Բաբեղաձորական ընկե-  
րութեան, և զարդների, և ընկերութիւնների  
մէջ, նոյն իսկ մամուլի մէջ: Նախ այժմ բոլոր  
ասպարէզներից հեռացված են. — ոչ հոգաբարձու  
են, ոչ ընկերութեան ղեկավար, ոչ երէցի, և  
ոչ էլ որ և է գործի վրա ազդող. — այսօրվանից  
նրանք մասնաւոր մարդիկ են, զուրկ ոյժից և  
ազդեցութիւնից. — այդ պատճառով մենք միան-  
գամայն ջնջում ենք հասարակական քննադատու-  
թեան ցուցակից դրանց անունները, վերջնակա-  
պէս արխիւը գցելով նրանց:

Նրանք այսօրվանից լուր մասնաւոր մարդիկ են  
և այդ պատճառով հասարակական քննադատու-  
թեանը չէ կարող հետաքրքրել ոչ Եւսեպուլեան,  
ոչ Աբիմեան, ոչ Բէհուլեան և ոչ Յովհաննի-  
սեան:

ձեռնարկ է, Արգար Յովհաննիսեան, իբրեւ «Ար-  
ձաղանքի» խմբագիր, դեռ մնում է իբրեւ հասա-  
րակական գործիչ: Սակայն, ում չէ յայտնի, որ  
եթէ Յովհաննիսեան որ և է փոքրիկ ազդեցու-  
թիւն ունեցել է, այդ եղել է զխաւորապէս իբրեւ  
հոգաբարձու, իբրեւ ընկերութեան ղեկավար, իբ-  
րեւ հասարակական հիմնարկութիւնների մէջ բուն  
գործ մարդ, որովհետեւ նա իբրեւ հրատարակա-  
խօս, իբրեւ խմբագիր, իբրեւ գրող ոչինչ ոյժ չէ  
ներկայացնում, ոչինչ ազդեցութիւն չէ արել և  
չէ կարող անել:

Այդ պատճառով մոռացութեան տալով Արգար  
Յովհաննիսեանին, իբրեւ զանազան հիմնարկու-  
թիւնների մէջ գործողի, որտեղից նա արդէն հե-  
ռացված է, մենք առանձին ուշադրութիւն չենք  
դարձնի նրա վրա, իբրեւ գրողի վրա, որովհետեւ  
այդ ասպարիւրում նրա ոյժը շատ չնչին է, և  
նրա դէմ ձայն կը բարձրացնենք միայն բացառիկ  
ղեկներում, երբ նա նորից կը փորձի մարդեց-  
նել հասարակայնի կարծիքը:

Եւ ահա մարդկանց ձեռնարկը այդ մարդկան-  
ցից, մենք կը շարունակենք առաջ գնալ հաստատ  
քայլերով և անդադրելով:

Արդէն արխիւի մտով այդ մարդկանց,  
մենք կը շարունակենք պաշտպանել մեր հասա-  
րակական հիմնարկութիւնները նոր ցեղերից, կը  
շարունակենք ամենախիստ քննութեան ենթար-  
կել այդ չկոյտի նոր ծնունդներին, եթէ միայն  
այդպիսիները հանդէս կը գան, և մուտք կը գոր-  
ծեն մամուլի կամ հասարակական գործերի մէջ:

Խղել, յետին միտք դարձնելով, կառավարութիւնը  
մի ճարպիկ վարադուրով քողարկեց այդ նպա-  
տակը, և յայտարարեց, թէ Սասունի հայերից կա-  
մենում է հարկ ժողովել:

Ահա այս կեղծ մտադրութեամբ նա մի քանի  
անգամ գործ ուղարկեց Սասունի վրա՝ և տեղի  
տուեց վերել իշխած սովորական կռիւներին:  
Բայց երբ այս կռիւներից նոյն իսկ ամենամե-  
ծը, — ութսուտեան թուականներին Մահմէդ-բէյ  
Վանից 2,000 զօրք և բազմաթիւ թնդանոթի-  
ներ տարաւ սասունեցոյ վրա, — անպաշտ կը տ-  
նեցաւ, մտածեց մի աւելի խորամանկ միջոցի  
գիւղը — գրգռել քրդերի կրօնական մոլեռանդու-  
թիւնը: Այս նպատակով Բաղէշի կառավարութիւնը  
1890—91 թուականներին երեք շէյխ ուղար-  
կեց Սասուն՝ քրդերի մեքերը պղտորելու:

Այդ շէյխերի թուում էր և նշանաւոր Հալի-  
Կայիբը, որը յայտնի է իբրեւ ամենազօրեղ նեղուկ  
հանրածանօթ Մուսա-բէյի ոճրագործութիւնների  
նա իր մոլեռանդ պաշտպանդարով միանգա-  
մայն գրաւեց քրդերի համակրութիւնը, այնպէս  
որ վերջիններս հայերին դիմելու չէին (հա-  
ւատի թշնամի)՝ հրատարակելով, կտրեցին իրանց  
բարեկամական վաղմի կապը, և հակադարձ





